ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի N 1031-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի N 1031-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածների, «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 31-րդ մասի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թվականի օգոստոսի 15-ի՝ «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի բնութագրիչները, որակավորման տարակարգերի շնորհման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1321-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1031-Ն հրամանի (այսուհետ՝ հրաման)՝

1)3-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

2)հրամանի հավելվածի՝

ա. 2-րդ կետում «որոնք տարբերվում են որակավորման առաջին աստիճանի տարակարգի բնութագրիչներից» բառերը փոխարինել «որոնց բովանդակությունը տարբերվում է որակավորման առաջին աստիճանի տարակարգի համար ներկայացված բնութագրիչների բովանդակությունից:» բառերով,

բ. 3-րդ և 4-րդ կետերում «դեպքում» բառից հետո լրացնել «, որոնց բովանդակությունը տարբերվում է որակավորման նախորդ աստիճանի

տարակարգերի համար ներկայացված բնութագրիչների բովանդակությունից» բառերով,

գ. 6-րդ կետի 1-ին ենթակետում «վարպետության» բառից հետո լրացնել «լավ կամ գերազանց» բառերը,

դ. 6-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) վերջին երեք տարվա ընթացքում իր դասավանդած առարկայից Հայաստանի Հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների («Ֆիզկուլտուրա» առարկայի դեպքում՝ առարկայի շրջանակներում անցկացվող մրցումների կամ մարզական միջոցառումների) հանրապետական փուլում կամ միջազգային օլիմպիադաներում մրցանակակիր սովորող ունենալը,»,

ե. 6-րդ կետի 3-րդ ենթակետում «հուշագրեր ունեցող կազմակերպություններում» բառերը փոխարինել «համագործակցող տեղական կամ միջազգային կազմակերպություններում կամ հարթակներում կամ Եվրոպական դպրոցների համագործակցության «Իթվիննինգ» ծրագրում» բառերով,

զ. 6-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա. տեղական (նախարարության Բարձրագույն որակավորման կոմիտեի, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի, Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների) կամ արտերկրի կամ միջազգային գիտական կամ մանկավարժական պարբերականներում կամ խմբագրական կազմ ունեցող տեղական կամ միջազգային գիտաժողովների նյութերի ժողովածուներում գիտական կամ մանկավարժական հոդվածի հեղինակ կամ համահեղինակ լինելը,»,

է. 6-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունում «ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկի կամ ուսումնաօժանդակ նյութի» բառերը փոխարինել «ուսումնական նյութի» բառերով,

ը. 6-րդ կետի 6-րդ ենթակետում «արդյունքում» բառից հետո լրացնել ««լավ» կամ» բառերը,

թ. 6-րդ կետի 7-րդ ենթակետի «բ» և «գ» պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ. ՀՀ Նախագահի, ՀՀ վարչապետի, նախարարության կողմից պատվոգրերով կամ շնորհակալագրերով կամ հուշամեդալներով պարգևատրված լինելը կամ

«գ. նախարարության կողմից կամ նախարարության հետ համատեղ իրականացված հանրապետական մրցույթներում մրցանակային տեղ զբաղեցնելը,»,

ժ. 6-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«8) վերջին երկու տարվա ընթացքում Որակի եվրոպական հավաստագրի առկայությունը,»

ի. 6-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9-րդ ենթակետով.

«9) գիտական աստիճան կամ կոչում ունենալը։»,

իա. 7-րդ կետի 1-ին ենթակետում «ՀՀ կրթության և գիտության նախարարին» բառերը փոխարինել «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին» բառերով,

իբ. 7-րդ կետի 2-րդ ենթակետում «անձնագրի» բառը փոխարինել «անձը հաստատող փաստաթղթի» բառերով։

իգ. 7-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«5) Տվյալ հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի կողմից տրամադրված ոչ ավելի, քան 1 ամսվա վաղեմության տեղեկանք (ձև 1) (անհրաժեշտության դեպքում՝ աշխատանքային գրքույկի բնօրինակի տեսաներածված (սկանավորված) տարբերակը և/կամ աշխատանքային ստաժի վերաբերյալ անհատական հաշվից քաղվածքի բնօրինակի տեսաներածված տարբերակը»,

իբ. 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Փաստաթղթերը ներկայացվում են նախարարություն թղթային կամ էլեկտրոնային (տեսաներածված) տարբերակով։»:

Ձև 1

ՏԵՂԵԿԱՆՔ

N _____ «_____» _____ 202__թ.

Տրվում է _____ին առ այն, որ նա _____ թ.

(անուն, հայրանուն, ազգանուն)

առ այսօր, թիվ _____ հրամանի համաձայն, աշխատում է _____

(ուսումնական հաստատության անվանումը)

_____-ում որպես « _____ » առարկայի ուսուցիչ:

_____ տնօրեն՝

(ուսումնական հաստատության անվանումը)

Ստորագրություն

Կ.Տ.

Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ